

վեժս¹ արարեալ հեղձամղձուկս² առնէին. եւ զայլսն ի նոցանէ դաշտացն եւ անտառախիտ մայրեացն ցրուեալս վատնէին:

17 Իսկ ոմանք յաւագորերոյ Պարսիցն ելեալք ի նաւս՝ յայնկոյս գետոյն մեծի փախստեայք լինել ճեպէին: 12 Որ եւ զԿամսարականն Արշաւիր զիշխանն Արշարունեաց ստիպով փութացուցանէր երանելի զաւրավարն Յայոց Վարդան՝ զկնի փախստեից նաւացն նետածիգ լինել, ի հաստատածգութիւն եւ յանվրեպ դիպողութիւն առնն վստահեալ: 13 Իսկ Կամսարականն Արշաւիր, որպէս եւ միշտ կամակատար էր բանի սրբոյ զաւրավարին, վաղվաղակի հաւանեալ առ ի նմանէ հրամանին՝ զկնի նաւավարացն եւ փախստեիցն նետածիգ լինէր: 14 Եւ խոցեալ զնաւավարսն³ եւ զայլս բազումս ի նաւսն՝ կարեվէրս առնէր. որոց ընդ տապալել վիրաւորացն կործանէին նաւքն. եւ բազումք ի նաւավարացն եւ ի գլխաւորացն⁴ Պարսից գետասոյգ եղեալ կորնչէին: 15 Եւ այսպէս շնորհեալ նոցա զյաղթութիւն վերին աւգնութեանն՝ դառնային ի բանակս իւրեանց, գոհանալով եւ աւրինելով զԱստուած:

16 Եւ դադարեալք անդէն ի տեղուոյն զաւրն զայն՝ ի վաղիւն չուեալք անցանէին ընդ գետն մեծ, անուանեալն Կուր գետ, եւ հասանէին ի պահակ որմոյն, որ է ընդ մեջ իշխանութեանն Աղուանից եւ Յոնաց. եւ գտեալ անդ զպահապանս պահակին եւ այլ զաւրականս պարսիկս բազումս, յորոց սուր ի վերայ եղեալ կոտորէին. եւ զպահակն յանձն առնէին թագաւորագնի միում Աղուանի, որում անուն էր Վահան, եւ զնոյն արծակէին դեսպան ի Յոնս եւ առ այլ⁵ ամրականս տեղեացն, զորս հաւանեցուցէ միաբանել նոցա զնդաւ. որոց կամաւ եւ յաւժարութեամբ զաւգնելն յանձն առեալ՝ հաստատէին երդմամբ⁶:

Լ2. Եւ մինչդեռ այս ամենայն կատարէր այսպէս յաջողութեամբն Աստուծոյ ըստ կամաց նոցա՝ յանկարծակի դեսպան հասանէր առ երանելի զաւրավարն Յայոց Վարդան եւ առ ամենայն գունդն որ ընդ նմա էին. գոյժ տրտմութեան եւ համբաւ չարաչար տայր նոցա⁷, ասելով, թէ «Ստեաց⁸ անաւրէնն Վասակ ուխտին Աստուծոյ եւ նենգեալ դրժեաց⁹ Աւետարանին երդմանն, եւ ի յետս կացեալ ապստամբեաց ի միաբանութենէ ճշմարտու-

1 Ատ. գետավեժս

2 ՏՏ. հեղձամղձուկ

3 Ձ. զնաւավարն

4 ՏՏ. եւ գլխաւորացն

5 Ատ. առ եւ այլ

6 Ձ. երդմամբ-ից յետոյ ունի ժԸ

7 ՏՏ. չիք տայր նոցա

8 ՏՏ. արդ ստեաց

9 Ատ. դժրեաց